



ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

15 ՀՈՒՆԻՍԻ
2022 թ.
№ 9 (1088)

Թերթի առաջին համարը լույս է տեսել 1965 թ. մարտի 11-ին
Երկշաբաթաբեր • Իրատարակման 57-րդ տարի

ԽԱՉԱՏՈՐ ԱՐԿԹԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԴԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԴԱՇՏՈՒԱԹԻՐ

Հոգաբարձուների խորհրդի նիստում

Մանկավարժական համալսարանում հունիսի 2-ին տեղի ունեցավ Հոգաբարձուների խորհրդի նիստ, որը վարում էր բուհի Հոգաբարձուների խորհրդի նախագահ, ԿԳՄՍ փոխնախարար Ժամնա Անդրեասյանը: Օրակարգում ՀՊՄՀ 2021թ. ֆինանսական գործունեության հաշվետվության և ՀՊՄՀ զարգացման 2022-2025 թթ. ռազմավարական ծրագրի գործողությունների կատարման պլանի նախագծի հաստատման հարցերն էին:

Համալսարանի ռեկտոր Սրբուհի Գևորգյանը ներկայացրեց ՀՊՄՀ հիմնադրամի տարեկան հաշվետվությունը, հիմնադրամի մուտքերն ու ելքերը, անդրադարձավ ֆինանսական աղբյուրներին, իրականացված մեծաշնորհային ծրագրերին, փաստեց, որ կցված է արտաքին աուդիտի եզրակացությունը:

Հոգաբարձուների խորհուրդը հաստատեց 2021թ. հաշվետվությունը:

Օրակարգի 2-րդ հարցը Համալսարանի 2022-2025 թթ. ռազմավարական ծրագրի քննարկումն էր, որը ներկայացրեց Կրթական գործընթացների կառավարման և բարեփոխումների վարչության



յան պետ, մանկավարժական գիտությունների թեկնածու Սամվել Ասատրյանը: Համալսարանի զարգացման տեսլականում հստակ սահմանված էին ուղենշային 11 ուղղություններ, դրանց

հասնելու խնդիրներն ու միջնաժամկետները:

Խոսելով ուղենշային ուղղությունների մասին՝ գեկուցողը հանգամանորեն անդրադարձավ որակյալ կրթական ծա-

ռայությունների, գիտահետազոտական գործունեության, կառավարման գործընթացների, դիմորդների, ուսանողների, կարիերայի, մարդկային ռեսուրսների կառավարման ու զարգացման, ֆինանսական գործունեության, ենթակառուցվածքների ու նյութատեխնիկական բազայի, հասարակության հետ տարվող աշխատանքների, միջազգային համագործակցության, կրթության որակի ապահովման և կրթության էլեկտրոնային ապահովման հարցերին:

Ռազմավարական ծրագրի աշխատանքային խումբը համակարգել է աշխատակազմի և միջազգային գծով պրոռեկտոր Մարիաննա Հարությունյանը:

Հոգաբարձուների խորհրդի նախագահ Ժամնա Անդրեասյանը շնորհակալություն հայտնեց համագործակցային ձևով ռազմավարական ծրագիրը լրամշակելու համար և ներկայացրեց իր որոշակի դիտարկումները ծրագրի ուղղությունների շուրջ:

Իրենց նկատառումները ներկայացրին նաև Հոգաբարձուների խորհրդի այլ անդամներ:

Հպարտորեն են կրելու համալսարանական Ավագ դպրոց-վարժարանի շրջանավարտը լինելու պատիվը

Մանկավարժական համալսարանի ավագ դպրոց-հենակետային վարժարանում օրը տոնական էր՝ լի հույզերով ու գեղեցիկ զգացողություններով. «Վերջին զանգի» արարողությունն էր... Ավագ դպրոցն այս տարի ավարտեցին 6 հոսքի 137 աշակերտներ: Դպրոցական շենքի բակում գունագեղ ու արևոտ հանդես էր՝ շրջանավարտների լուսավոր ու ջերմ ժպիտներով, ծաղիկներով ու փուլիկներով... Եվ ամենախորհրդանշականն այն է, որ այս տարվա շրջանավարտներն ավարտում են սիրելի Մանկավարժական համալսարանի հորեյանական տարում:

Մեկ րոպե լռությամբ հարգեցին գոհված հերոսների հիշատակը և ծաղիկներ խոնարհեցին գոհված վարժարանցիների հիշատակին նվիրված հուշ-անկյունին:

«Այս օրը մեզ համար հատկանշական է, դպրոցական անփոխարինելի տարիների ամփոփման օրն է, տոնական վերջին զանգը, տոն, որը ուրախության և տխրության, ջերմության, հույզերի,



դպրոցական խենթ տարիների և դրանց հիշողությունների միացությունն է. չէ՞ որ դպրոցական տարիներն անգնահատելի հարստություն են յուրաքանչյուրիս կյանքում»:

Շրջանավարտները: Կյանքի շրջադարձային այս փուլում նրանք կարևորում են դպրոցն ու կրթությունը, արժևորում ուսուցչի նվիրումը: Անդրադարձ են անում 1922 թվականին, որից մինչ այսօր Մանկավարժական համալսարանը ստանձնել է ուսուցիչների կերտման պատասխանատվությունը: Շրջանավարտները փաստում են՝ այստեղ գտնվողներից յուրաքանչյուրը ՀՊՄՀ-ի մասնիկն է: Համալսարանը մշտապես աջակցել է, հոգացել, որ իրականացնում էր երազանքը՝ սովորել հիմնավերամորոգված շենքում: Խոստովանում են՝ յուրաքանչյուրը հպարտորեն է կրելու համալսարանական ավագ դպրոց-վարժարանի շրջանավարտը լինելու պատիվը:

Դպրոցական բակը լցվում է պարային ջերմ ռիթմերով. շրջանավարտների պարահանդեսն անթաքույց ուրախություն է պարզևուն ուսուցիչներին, ծնողներին, հյուրերին: Ապա շրջանավարտները դեպի կապույտ երկինք են ուղարկում ճերմակ օդապարիկներ:

Շրջանավարտներին ջերմորեն ողջունում և բարեմաղթանքի խոսք են

հղում ԿԳՄՍ փոխնախարար Ժամնա Անդրեասյանը, ռեկտոր Սրբուհի Գևորգյանը, վարժարանի հիմնադրման ակունքներում կանգնած, երկարամյա տնօրեն, այժմ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Նաիրա Սաֆարյանը:

«Ձեր առջև բացվում են նոր հնարավորություններ, եկել է ինքնուրույն որոշումներ կայացնելու ժամանակը՝ ընտրել այն ուղին, որը ձեզ թույլ է տալու առաջ գնալ ձեր նպատակների իրագործման ճանապարհով», -ասում է ԿԳՄՍ նախարարի տեղակալ Ժամնա Անդրեասյանը:

«Ունենք շրջանավարտների հերթական պայծառ սերունդ, որ համալրելու է հանրապետության տարբեր մասնագիտական շրջանակների համակազմը, այդ թվում նաև՝ մանկավարժական», -ասում է ՀՊՄՀ ռեկտոր Սրբուհի Գևորգյանը: Նա վստահ է՝ ունենալու ենք նոր որակի, նոր մոդելի ու մոտեցումների, ապագայի աշակերտի համար իմացական պահանջումները բավարարող ուսուցիչ, ապա շնորհակալություն է հայտնում ուսուցիչներին՝ սիրո և ջերմության մթնոլորտում աշակերտներին կրթելու և դաստիարակելու, ծնողներին էլ՝ իրենց երեխաների ուսումնառության մախապատվությունը Մանկավարժական համալսարանի վարժարանին վստահելու համար:

Պրոռեկտոր Նաիրա Սաֆարյանը փաստում է՝ համատեղ կարողացան դժվարին պայմաններում հաղթահարել հանրակրթության 3-րդ աստիճանին անցնելու բոլոր դժվարությունները: Նա շրջանավարտներին հորդորում է լինել առավել զգոն և պատասխանատու, աշխատասեր և նպատակասլաց:

Ներկաները բարի երթ են մաղթում մեր երկրի բոլոր շրջանավարտներին. թող խաղաղության մեջ իրականացնեն նրանց երազանքները:





ԼՐԱՆՈՍ

Հանդիպում հայազգի գիտնականի հետ

Հունիսի 10-ին Մանկավարժական համալսարանում եր իրանցի փիլիսոփա, Դուբլինի համալսարանի փիլիսոփայության պրոֆեսոր, Իռլանդիայի թագավորական ակադեմիայի ընտրված անդամ, փիլիսոփայական հետազոտությունների միջազգային ամսագրի գլխավոր խմբագիր, WISDOM փիլիսոփայական ամսագրի խմբագրական խորհրդի անդամ հայազգի Մարիա Բաղրամյանը:

Մարիա Բաղրամյանն ավարտել է Բելֆասթի Քուինս համալսարանի փիլիսոփայության և սոցիալական անտրոպոլոգիայի ֆակուլտետը: Դուբլինի Թրինիթի քոլեջից ստացել է տրամաբանության փիլիսոփայության դոկտորի կոչում, ուսանել է բրիտանացի փիլիսոփա Թինոթի Ուիլյամսի մոտ:

Մ. Բաղրամյանը դասավանդել է Դուբլինի Թրինիթի քոլեջում, Դուբլինի համալսարանական քոլեջում, եղել է Փիլիսոփայության դպրոցի տնօրեն, Դուբլինի համալսարանական քոլեջի ճանաչողական ուսումնասիրությունների հետազոտական ծրագրի համանախագահ:

Հանդիպումը պրոֆեսոր Մարիա Բաղրամյանի հետ նախաձեռնել էր ակադեմիկոս Գեորգ Բրուսյանի անվան փիլիսոփայության և տրամաբանության ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Հասմիկ Հովհաննիսյանը:

Հայազգի գիտնականի հետազոտության հիմնական բնագավառներն են լեզվի փիլիսոփայությունը, ռացիոնալիզմը, 20-րդ դարի ամերիկյան փիլիսոփայությունը:

Համալսարանի ղեկավարության հետ Մ. Բաղրամյանը քննարկեց



գործակցային հնարավորությունները փիլիսոփայության ոլորտում և հայտնեց իր աջակցությունը իրականացվելիք համատեղ ծրագրերին:

ՀՊՄՀ ղեկավար Ս. Գևորգյանն իր գոհունակությունն արտահայտեց հանրապետությունում միակ մանկավարժական բուհին գործընկեր դիտարկելու և համատեղ ծրագրեր իրականացնելու առաջարկության համար, ինչը կօգնի համալսարանին զարգացման տեսլականում բովանդակային նոր հեռանկարների, ինչպես նաև երիտասարդ գիտնականներին միջազգային ծրագրերում ընդգրկելու առումով:

Հայազգի փիլիսոփան վստահեցրեց, որ առաջիկայում ակադեմիկոս Գեորգ Բրուսյանի հիմնադրած Հայոց փիլիսոփայական ակադեմիան կարող է անդամակցել Միջազգային փիլիսոփայական ընկերությունների ֆեդերացիային (FISP), որի նախագահության անդամ է նաև ինքը, և որ հայ փիլիսոփաները հնարավորություն կունենան մասնակցել 2024 թվականին Վենետիկում կայանալիք Համաշխարհային փիլիսոփայական կոնգրեսին:

Ամփոփվեց մանկավարժական պրակտիկան

ՀՊՄՀ-ի Մանկավարժության ամբիոնի նախաձեռնությամբ, ի դեմս ամբիոնի ղոցեմստեր, մանկավարժական գիտությունների թեկնածուներ Գ. Հարությունյանի, Գ. Եգանյանի և Ա. Բաղդասարյանի, 2-րդ կուրսերի ուսումնաճանաչողական և 3-րդ կուրսի ուսանողների կիրառական մանկավարժական պրակտիկայի շրջանակում կազմակերպվեց արդեն ավանդույթ դարձած ցուցահանդես՝ նվիրված համալսարանի 100-ամյակին:

Ցուցադրությունը ամբողջացնում էր բուհի բոլոր ֆակուլտետներ



րի 2021-2022 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի պրակտիկայի ընթացքում ապագա մանկավարժների կատարած բազմաթվական դաս աշխատանքները: Եվ ինչպես ընդգծեցին ապագա սոցիալական մանկավարժները. «Պրակտիկայի ողջ ընթացքում մենք ունեինք հստակ հրահանգ՝ տոն դարձնել յուրաքանչյուր երեխայի ամեն օրը»: Ուսանողները վերոնշյալը փաստեցին ներկայացնելով իրենց «ձեռքբերումների ծառն» ու «դժվարությունների օդապարիկը»՝ արդեն իսկ հաղթահարված:

Ուսանողները վստահեցրին, որ մանկավարժական պրակտիկան նպաստել է իրենց մանկավարժական մտածելակերպի ձևավորմանն ու մասնագիտական, համագործակցային-հետազոտական կարողությունների զարգացմանն ու դրսևորմանը:

Հունիսի 1-ը Երեխաների իրավունքների պաշտպանության միջազգային օրն է, որի առթիվ համալսարանի Մանկավարժության ամբիոնը մշտապես կազմակերպում է խորհրդանշական միջոցառումներ: Ցավոք, ինչպես իր ելույթում ընդգծեց ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Ար

յի ֆակուլտետ), Աննա Կոստանյանը (Բանասիրական ֆակուլտետ), Խաչիկ Խանիսյանը (Պատմության և հասարակագիտության ֆակուլտետ):

«Ի՞նչն է մարդուն ուսուցիչ դարձնում, թերևս մի բան փոխելու ցանկությունը», -վստահեցրեց Լիլիթ Պողոսյանը: «Մարդուն պետք է սովորեցնել սովորել ողջ կյանքի ընթացքում», -բարձրաձայնեց Արուս Այվազյանը:



«Մանկավարժությունը ոչ միայն գիտություն է, այլև արվեստ», - ասաց Անի Եփրեմյանը, իսկ Աննա Կոստանյանն ընդգծեց. «Յուրաքանչյուր երեխա ինքնատիպ է, և այդ ինքնատիպությունն ապահովում է ուսուցիչը»: Խաչիկ Խանիսյանն էլ խոստովանեց. «Առանց դպրոցի շնչառության, առանց նրա հեքի չեն կարող»:

Նախադպրոցական մանկավարժության և հոգեբանության ամբիոնի վարիչ Արմինե Մանուկյանը ներկաների ուշադրությունը հրավիրեց տե-

Ուսանողական փառատրոն՝ «Իմ համալսարանը 100 տարեկան է»

ղա թոփուզյանը՝ «թեև երեխաների տոնի հռչակումն անցել է 20 տարի, այնուամենայնիվ երեխաների հանդեպ հասարակության վերաբերմունքում օրեօր չի փոխվել»:

Տոները պարզապես վերաբերվելու համար են, իսկ երեխաների իրավունքները պետք է մեծերի հոգածության ներքո լինեն ամեն օր. երեխան իր հանդեպ պետք է ամեն օր զգա մեծերի ուշադրությունն ու արժևորումը: Ինչևէ...

Համալսարանի Մանկավարժության ամբիոնի նախաձեռնության հեղինակներն այս տարի հետաքրքիր ու գեղեցիկ ձևաչափով ներկայացրին և՛ երեխաներին, և՛ մեծերին՝ սերունդների համերաշխությունն ուղղորդելով օրվա խորհրդին:



Ամեն տարի, տարբեր խորագրերով, ուսանողների քարոզներն ու հորդորներն ուղղվում են մեծերին՝ հիշեցնելով երեխաների հանդեպ ճիշտ վերաբերմունքի կարևորությունն ու անհրաժեշտությունը: Այս անգամ ամենամյա մրցույթը կրում էր փառատրոնային բնույթ՝ «Իմ համալսարանը 100 տարեկան է» խորագրի ներքո: Տարբեր ֆակուլտետների ուսանողները պատրաստել էին քարոզներ, որոնցով ավագ դպրոցների աշակերտների ուշադրությունը հրավիրում էին 100-ամյա Մանկավարժական համալսարանին: Ուսանողները ներկայացնում էին համալսարանի 100-ամյա պատմության փառավոր ուղին, մասնագիտությունների գրավչությունը, ուսուցչի առաքելությունն ու բուհական այն միջավայրը, որտեղ սովորեցնում են սովորել, ազատ մտածել, ստեղծագործել, ձեռք բերել ոչ միայն մասնագիտական գիտելիքներ, այլև ապագա ուսուցչին անհրաժեշտ ամենատարբեր որակներ...

Փուլային ընտրության արդյունքում ուսանողական քարոզների և սոցիալական հոլովակների փառատրոնի եզրափակիչ հանդեսին մասնակցության հայտ էին ստացել լավագույն 5 քարոզների և 6 հոլովակների հեղինակները:

Մրցանակային առաջին երեք տեղերի համար քվեարկությանը մասնակցեցին տարբեր դպրոցներից հրավիրված աշակերտները:

Հաջորդաբար ելույթ ունեցան Լիլիթ Պողոսյանը (Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետ), Արուս Այվազյանը (Սկզբնական կրթության ֆակուլտետ), Անի Եփրեմյանը (Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկա-

սահուլովակների վրա՝ ընդգծելով, որ առանց մեղիագրագիտության հնարավոր չէ հաջողության հասնել:

Արդեն 9-րդ անգամ էր անցկացվում ավանդույթ դարձած հունիսյան միջոցառումը: Ամբիոնին մոտեցավ և ելույթ ունեցավ քարոզների մրցույթի առաջին հաղթող ուսանողը՝ Միշա Թադևոսյանը, ով արդեն դասախոսում է համալսարանում: «Պետք է ազատագրել մեր միտքը՝ ազատություն տալու համար երեխաներին», -ձևակերպեց նա:

Ապա բեմը տրամադրվեց Գեղարվեստական դաստիարակության և մշակույթի մանկապատանեկան կենտրոնի Մարիոնետների թատրոնի երեխաներին, ովքեր գեղեցիկ կատարումներով հաճելի զգացողություններ պարզեցին ներկաներին:

Ելույթ ունեցան ՀՊՄՀ Բանասիրական ֆակուլտետի ամբիոնի վարիչ Անիտա Դուլիսյանյանը, ղեկավար Աշոտ Գալստյանը, Սկզբնական կրթության ֆակուլտետի ղեկավար Հեղինե Խաչատրյանը: Նրանք արժևորեցին Մանկավարժական, համալսարանի առաքելությունն ու նեկղարյա պատմությունը կերտած երախտավորներին, նաև ուսանողներին քարոզները:

Ժյուրին ներկայացրեց քարոզների հաղթողներին՝ Արուս Այվազյանը, Լիլիթ Պողոսյանը և Խաչիկ Խանիսյանը համապատասխանաբար զբաղեցրին 1-ին, 2-րդ, 3-րդ տեղերը: Լավագույն ճանաչված տեսահոլովակի հեղինակները Լուսինե Մակինյանը և Մարիամ Եփրեմյանն էին, 2-րդ տեղի համար լավագույնը ճանաչվեց Մարիամ Պետրոսյանի պատրաստած հոլովակը, 3-ը՝ Տաթև Թամրազյանինը էր:

Կարևորը ոչ թե մրցույթումն է, այլ համագործակցությունը՝ մշեց Հեղինե Խաչատրյանը, իսկ բոլոր քարոզների ու տեսահոլովակների մեջ ուսանողներն ընդգծեցին՝ Մանկավարժականը մեր երկրորդ տունն է:



ԼՐԱՃՈՍ Շամալսարան - մանկապարտեզ «Գանձերի կղզում»

«Պարոն նավապետ, Դուք առաջադրանք ունեք կատարելու: Պետք է նավարկեք ծովում, շրջեք տարբեր կղզիներում, գտնեք և բերեք թաքնված գանձերը»,-մավապետին տրված այս առաջադրանքով մեկնարկեց Երևանի №117 մուլտի-մանկապարտեզի միջին և խմբի տարեվերջյան հանդեսը:

Գանձերի կղզում նավապետի որոնումներին միացավ փոքրիկ նավաստիների խումբը՝ պատրաստ կատարելու հրամանատարի առաջադրանքները:

Ալարկոտների, Սուտլիկների, Լացկանների, Վախկոտների և Ավազակների կղզիներ. փոքրիկ ծովայինների ճանապարհորդությունն արկածային էր և լի անակնկալ հանդիպումներով: «Մենք շատ ենք ալարում, մենք միշտ ստում ենք, մենք լաց լինում, իսկ մենք էլ ամեն ինչից վախենում ենք»,- մավապետի անձնակազմին հանդիպելիս խոստովանեցին կղզիների բնակիչները:

Վերջիններիս բնավորության այս ու այլ վատ գծեր «բուժեցին» նավապետի պրոֆեսիոնալ և սրտացավ թիմի անդամները՝ ուրախ, աշխույժ երգ ու պարով:

Ճանապարհորդության վերջին կանգառում՝ Ավազակների կղզում, գանձերի համար համառ պայքարն անակնկալ ավարտ ունեցավ. կախարդական սնդուկը դատարկ էր:

«Բայց այստեղ ոչինչ չկա,-գարնացան գանձեր որոնողները,-



որովհետև մեր գանձերը դուք եք, ձեր գանձերը՝ մենք»,-դիմելով դահլիճում գտնվող ծնողներին՝ նշեցին հանդեսի փոքրիկ մասնակիցները:

ՀՊՄՀ Սկզբնական կրթության ֆակուլտետի շրջանավարտ, միջին և խմբի դաստիարակ Սաթենիկ Քմեթյանը խոստովանում է՝ տարեվերջյան հանդեսի թեմատիկայի ընտրությունը բարդ էր: Երկար մտածելուց հետո հասկացավ, որ երեխաներին մեծ ուրախություն կպատճառի գանձեր գտնելը. դա յուրաքանչյուր փոքրիկի մեծ երազանքն է. «Գանձեր գտնելն այնքան էլ հեշտ չէր. այն բարդ ու երկար ծովային ճամփորդություն է պահանջում: Երկարատև աշխատանքը տվեց ցանկալի արդյունք: Երեխաները փայլեցին իրենց կերպարներում՝ մեզ տեղափոխելով գանձերի կղզի»,-հավելեց դաստիարակը:

Երևանի № 117 մուլտի-մանկապարտեզի տնօրեն Հայկուհի Տեր-Նազարյանը խոստովանում է՝ Սաթենիկ Քմեթյանը պրպտող մանկավարժ է՝ պատրաստ իրականացնելու նոր ու հետաքրքիր նախագծեր: Վերջինս հանդեսը ստացված համարեց, իր գնահատականը՝ գերազանց:

Տնօրենը երկրորդում է կրտսեր ծովայիններին. աշխարհում երեխաներն են ամենամեծ գանձերը, նրանցից առավել այս կյանքում ոչինչ չկա: «Յուրաքանչյուր երեխայի հոգում «գանձեր» կան: Վստահ եմ՝ մեր երեխաները կմեծանան իսկական հայրերի իրենց հոգում եղած ծառայեցնելով՝ հզոր և ամուր հայրենիք ունենալուն»,-ամփոփելով միջոցառումը՝ նշեց տնօրենը:

Մարին ԱՂԵԿՅԱՆ

Հերթական ցուցադրությունը

Համալսարանի հումանիտար գրականության ընթերցասրահում բացված հերթական ցուցահանդեսը նվիրված էր Բանասիրական ֆակուլտետի «Գրականություն» առարկային վերաբերող գրքերին, որոնց մեջ ներառված էին ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի հեղինակած մենագրություններ, դասագրքեր, ուսումնական ձեռնարկներ, ինչպես նաև ֆակուլտետի շրջանավարտ հայտնի գրողների՝ 30-70-ական թվականներն ընդգրկող երկեր, ընդհանուր առմամբ՝ 67 հեղինակի 211 ստեղծագործություն:

Տարբեր անվանումներով գործած ֆակուլտետում դասավանդել են անվանի լեզվաբաններ ու գրականագետներ՝ ք.գ. դ. Հովհաննես Տեր-Միրաքյանը, ակադեմիկոս Արսեն Տերտերյանը, պետական գործիչ, լրագրող, հրապարակախոս Դրաստամատ Տեր-Սիմոնյանը, պատմաբան, գրող Լեոն, ազգագրագետ, պատմաբան, աշխարհագրագետ, բանասեր Ստեփան Լիսիցյանը, հայագետ, արևելագետ, բանասեր, ակադեմիկոս Կարապետ Մելիք-Օհանջանյանը, պրոֆեսորներ Գրիգոր Ղափանցյանը, Վահան Ռշտունին, Հակոբ Մամանյանը, լեզվաբան Մանուկ Աբեղյանը, հայագետ, լեզվաբան Հրաչյա Աճառյանը և ուրիշներ:



Գույներ նույնպես պար է...

Հայ մեծանուն նկարիչ Մինաս Ավետիսյանի գունաշխարհում Հայաստան աշխարհն է: Նրա կտավների վառ գույները հոգու և ներաշխարհի առկայություններից ծնված մի-մի պատկերներ են, որ ներկայացնում են նկարչի ապրումները, մտածողությունը, աշխարհընկալումը, կենսափիլիսոփայությունը... Յուրաքանչյուր կտավ միաժամանակ արտացոլում է նկարչի ներքին տառապանքը, և կարելի է դրանք իրար կողքի դնելով, տեսնել մաքառումների այն ճանապարհը, որի միջով անցել է Մինասը՝ պեղելով իր լեռնաշխարհի ամեն մի գույնը, զգալով հայ մարդու հոգեվիճակի անհանգիստ ապրումներն ու դրսևորումները:

Կուլտուրայի ֆակուլտետի Պարավետի մանկավարժության ամբիոնի ավարտական կուրսի ուսանողների 2021-2022 ուսումնական տարվա հաշվետու համերգ-քննությունը նվիրված էր Վարպետին՝ Մինաս Ավետիսյանին, խորեոգրաֆիկ ներկայացումը վերնագրել էին՝ «Մինասի գույները»: Կուրսի ղեկավար Գոհար Աբրահամյանի ղեկավարությամբ արված պարային բեմադրությունն ամիսների ահռելի աշխատանքի, ջանքի ու մասնագիտական նվիրումի արդյունք էր՝ առանձնահատուկ Մինասի կերպարի մարմնավորման ու կյանքի իրական անցքերը պարի միջոցով ներկայացնելու տեսանկյունից:

Օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնի բեմում գույների հրավառություն էր՝ Մինասի գույների հրավառությունը: Բեմի մեծ էկրանից դրվագ առ դրվագ դահլիճում գտնվողներին էր փոխանցվում նկարչի կյանքի կարևորագույն պահերը՝ ծննդավայր Ջաջուռից, մայրական սիրո դրսևորումներից մինչև կերպարվետի խորքերը պեղելու և կինոարվեստի հետ շփումներ, այդ ամենն ուղեկցվում էր յուրահատուկ պարային կատարումներով: Ուսանողները պարի միջոցով կենդանացրին Մինասի կտավները, նրանց մեջ էլ՝ Վարպետի խառնվածքը, բնավորության գծերն ու ներաշխարհը, մոգական գույները՝ լաջվարդ կապույտը, որդան կարմիրը, ծիրանագույն ու զմրուխտ կանաչը...

Մինասի կերպարը ներկայացնող Արշակն անթերի պարի միջոցով արտահայտում էր կերպարի էությունը, եթե հայոց լեռների պար՝ ապա տղաների քոչարին խրոխտ ռիթմերով էր լցնում բեմն ու դահլիճը, մայրական սերն ու ջերմությունն արտացոլող կտավներն ուղեկցվում էին աղջիկների պարային անսահման նազանքով ու քնքշանքով՝ բեմում վերակարտելով այն միջավայրը, որից ներշնչվել է նկարիչը և ճախրել տիեզերական անհուններում:

Ուսանողների և կուրսի ղեկավար, պարուսույց Գոհար Աբրահամյանի պարային լուծումները թաթախված էին նկարչի գույներով. պարային բոլոր դրվագները գունային թռիչքներ էին: Հատկապես դա տպավորիչ էր հրդեհի տեսարանում, ուր «կրակի» կարմիր ու սև ելևէջումներն ասես հասնում էին նկարչի տառապանքի խորքերը, այնտեղից նորից դուրս հորդում նոր ու նորացող պարային զգացողություններով ու ապրումներով...

Կատարված աշխատանքի հանդեպ իր հիացմունքն արտահայտեց և քննությունն արժևորեց բուհի ղեկավար, հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սրբուհի Գևորգյանը:

Պարային տոնն ավարտվեց ուսանողների «գերազանց» գնահատականներով, ինչը բեմից հայտարարեց Մանկավարժական համալսարանի ամբիոնի վարիչ, պարավետի երախտավոր Կարեն Գևորգյանը:

«Ես չեմ սպասում, բայց շատ մեծ աշխատանք է կատարվել, հոգի էր դրվել... Ջարմացած եմ, այո, ահռելի մեծ աշխատանք է կատարվել. հպարտանալու արժանի աշխատանք»,-ասաց Մինասի տղան՝ Արման Ավետիսյանը, ով դահլիճում էր և ի սկզբանե չէր պատկերացրել, թե ինչպես են հոր կտավի գույները ներկայացնելու պարի միջոցով...

Ավարտական աշխատանք ներկայացնող համերգից դասախոսները, ծնողները, հյուրերը հեռացան հրաշալի տպավորություններով՝ իրենց ընկալումներում ամրագրելով՝ հիրավի, «գույնը նույնպես պար է»...

Սիլվա ԱՍՐՅԱՆ

Զգալ, մտածել, սրել ծագործել...

Հին և իմաստուն խոսք է. աշակերտը ոչ թե մի դատարկ անոթ է, որը միայն պետք է գիտելիքներով լցնել, այլ ջահ է, որը պետք է վառել գիտության բոցով, խիզախումների և որոնումների բոցով: Հայոց լեզվի և գրականության ուսուցիչն այդ ջահի առաջին լուսարարն է, հոգածուն, որ երբեք չհանգչի այն:

Հայրենի գրականության աստղային ուղիներով ճամփորդության ելած իր սաների համար նա ուղեցույց է ու փարոս: Նա հարազատ ժողովրդի ոգու կրողն է, ոգի, որ հերոսական է ու անընկճելի, որ տոգորված է մարդու և աշխարհի նկատմամբ սիրով ու բարությանը: Այդ ոգուն պետք է հաղորդակից դարձնի իր աշակերտներին:

Նրանց համար հայրենասիրության առաջին գանգահարն է հայոց լեզվի ուսուցիչը. նա իմաստավորում է իր աշակերտների կյանքը՝ հայրենիքի նկատմամբ վեհ և անձնուրաց սեր ներարկելով:

Մեր սքանչելի գրականության մեջ արտացոլված համամարդկային վեհ գաղափարներով ու մարդկային բարձր զգացումներով նա պիտի տոգորի իր աշակերտներին: Այրում է նա կյանքը, ինք-

նաճոռաց նվիրաբերում գեղեցիկին ու հայրենիին: Մտահոգվելով իր աշակերտների քաղաքացիական նկարագրով, ազնվացնելով և բյուրեղացնելով նրանց զգացմունքները, գրականության ուսուցիչը պետք է ձգտի հասնել այն բանին, որ աշակերտը ստեղծագործի բառիս ամենալայն իմաստով, իրեն նվիրի ստեղծագործական որոնումներին, գրական երկի նկատմամբ մշակի սեփական կարծիք:

Մղելով իր սաներին խիզախումների և որոնումների՝ ուսուցիչն օգնում է, որ նրանք գրականության մեջ՝ բազմաբույր և բազմերանգ այդ պարտեզից քաղեն իրենց հոգու համար կենսատու ծաղիկներ, տարբեր են դրանք ջերմոցային սառը և անբույր ծաղիկներից, զգան իսկական պտեզիայի թովչանքը:

Զգալ, մտածել և ստեղծագործել. ահա թե ինչ պիտի սովորեցնի գրականության և լեզվի ուսուցիչն իր աշակերտներին:

Էմին ՄԱԼԽԱՍՅԱՆ
Երևանի № 108 միջն. դպրոցի հայոց լեզվի և գրականության ուսուցիչ



ԼՐԱՀՆՈՍ

«Ոսկե դասախոսությունների» շրջանակում

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Ռուսաց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դոցենտ, մանկավարժական գիտությունների թեկնածու Լիլիա Բալասանյանը հունիսի 9-ին մասնակցեց Երևանում Ռուսական տան աջակցությամբ իրականացվող «Ոսկե դասախոսություն» լուսավորչական միջազգային առցանց մախագծին և հանդես եկավ դասախոսությամբ:

Լ. Բալասանյանը խոսեց տարբեր հեղինակների աշխատությունների մասին, որոնք իրենց ստեղծագործություններում անդրադարձել են հայ և ռուս ժողովուրդների՝ երկուստեք լեզուների իմացության կարևորությանը, անդրադարձավ Ռուսաստանում



հայկական Սփյուռքի լուսավորչական գործունեությանը, 19-րդ դարի սկզբում հայկական դպրոցում ռուսերենի դասավանդման մեթոդաբանության զարգացմանը՝ շեշտելով նրանում նաև հայ մեծ լուսավորիչ, հայ նոր գրականության և լեզվի հիմնադիր Խաչատուր Աբովյանի մեծագույն ավանդը:

Բանախոսն անդրադարձավ հայկական դպրոցների համար ստեղծված ռուսաց լեզվի դասագրքերին՝ հավելելով, որ 20-րդ դարում Հայաստանում լույս են տեսել ոչ միայն ռուսաց լեզվի դասագրքեր, այլև մեթոդաբանությանը նվիրված գիտական լուրջ աշխատություններ: Դասագրքերի ստեղծման գործում անուրանալի է ՀՀՄՀ պրոֆեսոր Բելա Եսաջանյանի ներդրումը, ում ղեկավարմամբ 70-80-ական թվականներին ազգային դպրոցի համար հայ մեթոդիստները մշակեցին նոր սերնդի դասագրքեր:

«ՀՀ-ում ռուսաց լեզվի գծով առաջին դոկտոր, պրոֆեսոր Բելա Եսաջանյանի հեղինակած դասագրքերով սերունդներ են կրթվել: Որս ստեղծած դասագրքերն ու մեթոդական տեսությունները հիմնվում էին համեմատական-տիպաբանական վերլուծությունների, ինչպես նաև նախկինում ստեղծված մեթոդիկաների վրա», -ասաց Լ. Բալասանյանը:

ՀՀՄՀ Ուսումնագիտական գծով պրոռեկտոր Մարիամ Իսախյանը շնորհակալություն հայտնեց Մոսկվայի պետական մանկավարժական համալսարանին, ռեկտոր Էդուարդ Նիկիտինին, ինչպես նաև ծրագրի իրականացման գործում ներդրում ունեցած բոլոր գործընկերներին:

Պրոռեկտորը կարևորեց Ռուսաց լեզվի և գրականության ուսուցիչների հայկական ասոցիացիայի նախագահ Լիլիա Բալասանյանի դասախոսությունը՝ ընդգծելով նրանում ներառված նորարարական մոտեցումները ազգային դպրոցներում ռուսաց լեզվի մեթոդական հիմնախնդիրների անդրադառնալու տեսանկյունից:

Դոցենտ Լ. Բալասանյանը համոզված է՝ այդ խնդիրները կլուծվեն, եթե հասարակության կողմից լիովին ընկալվի մանկավարժի դերը:



րել, կապել մեր սրտին ու հոգուն՝ մեծ գեղարվեստով: Ապա եզրափակեց. «Նա այսօր էլ նույն ուսուցիչն է մնացել՝ նույն ազնվությունը՝ անսեփական, անսքող ճշմարտությամբ և անպաճույճ իր առիթնորդ խոսքով, մտքով և ասելիքով»:

Ելույթ ունեցավ բանաստեղծ Խաչիկ Մանուկյանը, ով ընդգծեց՝ հիշողությունը թանկ բան է, այն առավել թանկ է դառնում, երբ մեծ անհատներն իրենց վրա են կրում ազգի հիշողությունը: Այդպիսի գրող է Վրեժ Սարուխանյանը, «ուր ամեն արարումը հիշողության վերարտադրումն է: Վ. Սարուխանյանը հայ ինքնությունը բարձր պահող կերպար է: Հպարտ եմ, որ նրա ապրեցնող խոսքը կա»:

Համակուրսեցի, բանաստեղծ Հովհաննես Սարոյանը սասունցի Վրեժ Սարուխանյանին համարեց մեր ժա-

Վրեժ Սարուխանյանի ապրեցնող խոսքը

Մանկավարժական համալսարանի ընթերցասրահում գիտական գրադարանի տնօրեն Տիգրան Պետրոսյանը կազմակերպել էր գրող, հեռուստալրագրող, խմբագիր, Բանասիրական ֆակուլտետի 1969 թ. շրջանավարտ Վրեժ Սարուխանյանի «Ազգավաքար» գրքի շնորհանդեսը: Այն առանձնահատուկ էր նրանով, որ պատեհ առիթը ամբողջ կուրսին հավաքել էր հարազատ բուհի հարկի ներքո: Ներկա էին ճանաչված գրողներ, մշակույթի ոլորտի ներկայացուցիչներ, կուրսընկերներ:

Համակուրսեցի պրոֆեսոր Լալիկ Խաչատրյանը լավ ծանոթ է գրողի բոլոր գրքերին, բայց անդրադարձավ վերջին ստեղծագործությանը. գիրքն անցկացնելով իր հայեցողական պրիզմայով՝ ներկայացրեց՝ ինչ կոնցեպտ է դրել հեղինակը գրքի հիմքում. «Բավականին խորհրդանշական է, երբ նա խարխիս է նետում մեր էպոսին՝ ժողովրդական բանահյուսությանը»:


Բանախոսի կարծիքով հետաքրքիր մոտեցում է՝ անցյալը կապել մեր ներկային. «Սա կարոտն է մեր հայրենիքի նկատմամբ և հին արժեքներով վերապրելու ոգեկոչումը սերնդի համար»:

Երևանի նախկին երկարամյա փոխքաղաքապետ Կանո Արեյանի ելույթը ոչ միայն շնորհավորանքի խոսք էր, այլև Վրեժ Սարուխանյան ուսուցիչի մեծարում, ում դասերը հիշում է ամենայն սրբությամբ ու հպարտությամբ, ում բանաստեղծական տողերն արտաբերում է ուսուցչի համոզեալ աշակերտի ակնածանքով: Նա սիրով է հիշում այն օրը, երբ Աշնակից եկավ ու Ներքին Սասնաշեն դպրոցի 9-րդ դասարան մտավ հայ գրականության երիտասարդ ուսուցիչը՝ Վրեժ Սարուխանյանը:

Վստահ էր՝ Խաչիկ Դաշտենց, Մուշեղ Գալշոյան ծնած եզերքը պիտի նոր տաղանդներ ծնելու է»:

Կանո Արեյանը մատնանշեց ծնողներին, որոնք կենդանի դասագրքեր էին լսված, բայց չընթերցված. «մի իրական իրապատում, շատ առնական կարոտ, չհորանջող մի վերադարձի մրմունջ, որ մնաց չընթերցված: Եվ ահա այն առաքելությունը, որ արեց իմ ուսուցիչը, ուղղակի մարդկային սխարմը է, իսկ նրա գրականությունը՝ պահանջված և ապրեցնող: Նա զարմանալի վերադարձի գրող է»:

Կանո Արեյանը փաստեց՝ Վրեժ Սարուխանյանի յուրաքանչյուր իրապատում առաջինը մեզ է հասցեագրված, այնտեղ բոլորը կարող են գտնել իրենց. սա մեծ հիշողության դաշտ է: Նա իսկապես ծեռք է մեկնել մարկեայան համարձակությանը՝ հիշողությունը հովտում չկորցնելու տագնապով այդ ամբողջ իրապատումը բե-



մանակների ամենատաղանդավոր գրողներից մեկը:

«Մի ուրիշ հմայքով է իր կյանքի առաջին գործն սկսել Վ. Սարուխանյանը, միացել գրի, գրականության իր պայերին և այն կարոտներին, կանչերին, որոնք շրջում են Հայաստան աշխարհում, ավելի քան Արագածի փեշերին ընկած մեր Մասնո գյուղերում, որտեղ անբուն գիշերներ են այսօր, զարթոնքի լույսեր են այսօր, որտեղ հայոց էպոսի քնքշամբը երբեք չի վերջանում», -ասաց գրող Ռաֆայել Սահակյանը:

Գրող, լրագրող, ՀՀՄՀ շրջանավարտ Հովհաննես Պապիկյանն էլ Վ. Սարուխանյանի գեղարվեստական ստեղծագործություններում ընդգծեց այն հանգամանքը, որ նրա գրքերը

կարդում են և ցանկություն է առաջանում գնալ այդ վայրերը: Գրողը սերունդներին ուզում է ասել՝ դուք պարտավոր եք գնալ և տեսնել ձեր պապերի երկիրը: Այս մտածողությունը մտնում է սերունդների մեջ և նրանց կապում էրգրի հետ:

Գրող Անդրանիկ Ավետիսյանը ներկայացրեց «Ազգավաքար» գրքի ասելիքը. «Նրանք, ովքեր ուզում են մեզ Ազգավաքարում պահել՝ չարաչար սխալվում են: Վ. Սարուխանյանը ձեռքը դրել է մեր ցավի վրա, դրա համար էլ գիրքը կոչվում է «Ազգավաքար»: Թե ինչու ենք մենք Ազգավաքարում, մեր մեղքն ընդունում ենք՝ մենք ենք մեղավոր դրա համար: Ազգավաքարը խավար է, Միերի դուռը՝ լույս: Եվ մենք գնալու ենք լույսի ճամփով, մեր ճամփան Միերի դուռն է: Վրեժ Սարուխանյանը գրել է մեր սխալի մասին, որը չպիտի կրկնենք»:

«Ո՞վ ստեղծեց Ազգավաքարի լեզունը, ինչո՞ւ, ո՞ւմ ցանկությամբ, դա արդյո՞ք մերն է, ե՞րբ դուրս կգանք նրանից...-նախաբանում հռետորական հարց է տալիս հեղինակը: Մեր հերոսն է փակվել ու ինքն էլ փակ դուռը բացելու է միայն ներսից...»:

...Ամխելք բաներ ենք անում ու հավատում դրսի անշահառու արդարությանը: Այնինչ ներքին արդարությանը պիտի ապավինենք, որ դառնությունը վանենք մեր արդար հացից. ասել է թե՛ մեզանից, մեր սիրուց ու ատելությունից...»:

...Սովորեմք էպոսի դասերը», -գրում է Վրեժ Սարուխանյանը:

Վրեժ Սարուխանյանի հետ համդիպումը վերածվեց գրողին ու գրականությունը մեծարելու, նաև հայրենասիրության դասի, դաս, որ այսօր ապրողներիս շատ է պետք:

Սիլվա ԱՄՐՅԱՆ

ՕԳՏԱԿԱՐ ԴԱՍԸՆԹ-ԱՅԻ ՊՏՈՒՂՆԵՐԸ

Ավարտվեց «Մայրենիի ուսուցման մեթոդիկա» առարկայի երկրորդ կիսամյակի դասընթացը, որ վարում էր Մայրենիի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դոցենտ Մարգոլա Միրումյանը:

Մայրենիի ուսուցման մեթոդիկան մեզ սովորեցրեց գրաճանաչության, կարդալու, գրագետ խոսք կառուցելու կարողություններ ձևավորելու մեթոդները, ինչպես նաև օգնեց յուրացնելու մայրենիի ուսուցման մեթոդական համակարգը, որ ուղեկցելու է մեզ մեր ապագա աշխատանքային գործունեության ընթացքում: Մենք՝ որպես ապագա հայ մանկավարժներ, ծավալելու ենք ազ-



գամվեր գործունեություն: Մենք սուկ մանակավարժ չենք լինելու, հայրենիքի նկատմամբ սիրո սերմնացանը, այն եզակի մարդը միլիոնների մեջ, որի ուսերին է դրված հայ մանուկների հայեցի

կրթության սրբազան գործը, որով պայմանավորված է մեր ժողովրդի հարատևման գրավականը:

Հարգարժան դասախոսի հետ մենք ունեցանք շատ բովանդակալից և ուսա-

նելի դասեր: Մեկ կիսամյակի ընթացքում ուսումնասիրեցինք գրաճանաչության մեթոդիկան, իսկ դասընթացի ավարտին ներկայացրինք մեր ձեռքով պատրաստած տառադարանները, լուսոները, նկար-բառերը, նկար-նախադասությունները, նկար-պատմությունները, ինչպես նաև վանկերի խմբեր՝ բառեր կազմելու, և բառերի խմբեր՝ նախադասություններ կազմելու, ինքնուրույն խոսք ձևավորելու համար: Մեր աշխատանքն արժանացավ խրախուսանքի, որ մեզ անչափ բավականություն պատճառեց:

Սկզբնական կրթության ֆակուլտետի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» մասնագիտության երկրորդ կուրսի ուսանողներ



ԼՐԱՅԻՆ

Այբբենարան, դու բանալին ես աշխարհի

Մանկավարժական համալսարանի № 57 հիմնական դպրոցի 1 «ա» դասարանցիների, ուսուցիչների և ծնողների համար օրը տոնական էր: Կուլտուրայի ֆակուլտետի բեմում գույների շքերթ էր, գույների հրավառություն: 33 աշակերտներ, որ տառաճանաչ էին դարձել դասվարի Կարինե Զիրուխյանի ամենօրյա ջանք ու եռանդի շնորհիվ, ում հետ ցանկացած նախաձեռնություն աննախադեպ հրաշալի տոնի է վերածվում, հրաժեշտ էին տալիս Այբբենարանին:

Եվ ահա փոքրիկները բեմում են: Աշակերտների մի մասը մարմնավորում է սիրելի հեքիաթների ծանոթ հերոսներին. այստեղ են հեքիաթի Փերին, Մալվինան, Բուրատինոն, Գիտունիկն ու Անգետիկը, գայլը, Մաուզլին, Մանչուկն ու Կառլսոնը, թզուկները, Սպիտակաձյունիկը, մկնիկներն ու կատուն, ճպուռն ու մրջյունը, աղվեսն ու Այբուլիտը, շատակեր արջուկը...



Հերոսների մի մասը գերազանցիկներ են, լավ են սովորել ու հիմա հպարտանում են՝ գիտեն կարդալ, գրել, հաշվել, երգել, պարել, նկարել... Իսկ ամտառի «հերոսները» դպրոց չեն գնացել, ծույլ են ու կարդալ չգիտեն: Հանդեսի ընթացքում վերջիններիս հորդորում են դպրոց գնալ ու սովորել տառերը. այս ամենը ասումնքի, երգ ու պարի միջոցով: Հեքիաթի Փերին ու ճկուն հաղորդավարները հանդեսի հրավիրատուներ են տալիս բոլոր նրանց, ովքեր խոստանում են փոխել իրենց ապրելու կերպը՝ չծուլանալ, չխորանանկել, անապայման դպրոց գնալ ու սովորել տառերը, նաև երգ են նվիրում Այբբենարանին:

Այբբենարան, ընկեր ճանապարհի, Դու բանալին ես աշխարհի...

Հանդեսի ընթացքում մեր դպրոցականները բացահայտում են ջունգլիների օրենքը, ըստ որի պետք է սիրել բնությունը, մկներին հաշտեցնում են կատվի հետ, որովհետև «այս աշխարհում կյանքը միշտ պետք է լինի լուսավոր», մրջյունը ճպուռին դաս է տալիս, սվորեցնում աշխատել, որ ծնունդը սոված չմնա, իսկ ճպուռը բան չի հասկանում, պետք է դպրոց գնա, ծույլ ու ալարկոտ աղվեսն էլ չի կարողանում կարդալ հրավիրատուները, որովհետև չգիտի տառերը. նա նույնպես որոշում է՝ դպրոց պետք է գնա...

Եվ այսպես, բեմի լուսավոր ու գունեղ միջավայրում հնչում են դպրոցին, ուսուցչին, տառերին, Այբբենարանին, աշխատանքին, համերաշխությանը, մարդկային լավագույն հատկանիշներին ուղղված գեղեցիկ խոսքեր: Եվ այդ ամենը սովորեցրել է առաջին դասագիրքը՝ Այբբենարանը՝ առաջին դասարանցու լավագույն ընկերն ու ուղեկիցը:

33 հրաշք տղաներ ու աղջիկներ հրաժեշտ են տալիս առաջին դասագրքին ու հենց բեմի վրա էլ խոստանում են՝ այս գիրքը մեզ դեռ երկար կհիշեցնի սեպտեմբերն ու մեր ուսուցչին:

Իսկ օրվա նրանց առաքելությունը՝ գրաճանաչ դարձնել նաև անտառի բնակիչներին, կատարվեց. կարողացան անտառի փոքրիկ կենդանիներին ևս ուղղորդել դեպի դպրոց, որը գիտելիքի ամենագրեղ աղբյուրն է:

Փոքրիկներին բարեմաղթանքի ջերմ խոսքեր հղեցին դպրոցի տնօրեն Նաիրա Տողանյանը, դասվար Կարինե Զիրուխյանը, ծնողները: Ամեն ինչ գեղեցիկ էր ու գունեղ, հրաժեշտն էլ մի նոր ուսումնական տարվա սկիզբ էր խոստանում, երբ նորից կհնչի դպրոցական զանգը և կշարունակվի գիտելիքների ձեռքբերման լուսե ճանապարհը:

Սիլվա ԱՍՐՅԱՆ

ՇՆՈՐԵԱԿՈՐՏՈՆԴ, ՄԵՐԵԱՐՅՈՒՐԱՄՅԱ ԴՊՐԱՆՈՑ

Հարյուրամյա մանկավարժական համալսարան-հարյուր տարի անընդմեջ հայրենիքում և յուրաքանչյուր հայի կյանքում երախտարժան առաքելություն իրականացնող կրթության մշակների դարբնոց, մշակների, որոնք իրենց ողջ ընթացքին, գիտելիքի հանդեպ հոգու մեծ սերն ու նվիրումը փոխանցելով իրենց ուսանողներին, ամուր և անհոգմաբեկ ջանքերով ծաղկում են պահել հայրենի կրթօջախը՝ Հայկական պետական մանկավարժական համալսարանը:

Այժմ մտովի տարիների հեռվից են տեսնում Մանկավարժական համալսարանի հետ համագործակցության արգասիքը: Մանկավարժ աշխատելու սկզբնական տարիներին, մասնակցելով բազում վերապատրաստումների, դասընթացների, կարծես ստացա երկրորդ բարձրագույն կրթություն: Այնուհետ ընդգրկվելով հայոց լեզվի և գրականության օլիմպիադաների, ինչպես նաև տարբեր մրցույթների հանձնաժողովներում, հայտնվելով լավագույն դասախոսական կազմի՝ Աշոտ Գալստյանի, Աելիտա Դուրխանյանի, Լիլիթ Տեր-Գրիգորյանի, Ջուլիետա Գյուլամիրյանի, Դավիթ Գյուրջինյանի և այլ շատ պատկառելի անձանց կողքին՝ էլ ավելի սիրեցի մայրենին:

Տարիների ընթացքում փոխվել են համագործակցության ուղղությունները: Համալսարանի Բանասիրական ֆակուլտետի հետ համատեղ կատարված աշխատանքները՝ մանկավարժական պրակտիկա, սեմինարներ, միջոցառումներ և՛ բուհում, և՛ դպրոցում, իրենց հետագիծն են թողել էօրնեկեան հանրակրթական դպրոցի կյանքում:

Ինձ համար մեծ պատիվ է նաև Բանասիրական ֆակուլտետի շրջանավարտների ավարտական դիպլոմային աշխատանքների հանձնախմբերում ընդգրկված լինելը: Շատ ուսանելի քննաշրջանի ընթացքում, վայելելով ուսանողների անհատական կարողությունների ձևավորման դրսևորումները, հետազոտական և ստեղծագործական ունակությունները, նորարարություններով լի գիտելիքները, յուրաքանչյուր տարի յուրովի բացահայտում են մեր երկրի համար առանցքային նշանակություն ունեցող այն մեծ ուժը, որն առանձնահատուկ կարևորություն է ընձայում գիտելիքին ու դպրությանը՝ աստվածապարզ հայոց այբուբենի յուրաքանչյուր տառը դիտարկելով հայոց ինքնության պահպանությանը կոչված զինվոր, և դպրոցը՝ որպես ազգի հարատևման անխորտակելի ամրոց:

Հարյուրամյա հոբելյանական տարվա կապակցությամբ ուժ և եռանդ ենք մաղթում բոլոր համալսարանականներին՝ Սահակ-մեսրոպյան ոգով, աստվածահաճո ճանապարհներով, բարեջան ու նախանձախնդիր գործունեությամբ շարունակելու կենցաղուսույց ներդրումներ կատարելու կրթության և դաստիարակության ասպարեզում: Թող ձեր փոխանցած գիտելիքն ու իմացությունը, հոգևոր և բարոյական արժեքները շարունակաբար առանցքային և հիմնարար լինեն մեր ժողովրդի կյանքում:

Շնորհավոր տոնդ, մեր հարյուրամյա դպրանոց:

Սուսաննա ՎԱՐԴԱՆՅԱՆ
Եօրնեկեան հանրակրթական դպրոցի տնօրեն



Բարև ձեզ, սիրելի...

Համալսարանում դասավանդում են 1996-97 ուսումնական տարվանից: Հենց այդ ժամանակից էլ Բանասիրական ֆակուլտետը և ես ամբաժան ենք: Ինձ համար շատ հետաքրքիր է այս ֆակուլտետում դասավանդելը, որովհետև ուսանողներն ինձ զարմացնում են իրենց գիտելիքները մշտապես հարստացնելու, բնության մասին ավելի շատ բան իմանալու, բնության մեջ գոյություն ունեցող կապերն ու օրինաչափությունները հասկանալու ձգտումով, նաև հանձնարարությունները կատարելու պատրաստակամությամբ:

Տարիներ առաջ ուսանողներին առաջարկում էի լսարանում փորձնական դասեր անցկացնել՝ հաղորդվող ուսումնական նյութը կապելով էկոլոգիայի հետ: Չեմ կարող մոռանալ մի երիտասարդի անցկացրած դասը՝ նվիրված Ա. Բակունցի «Մթնածորը» թեմային, որի ընթացքում նա, ներկայացնելով կուսական բնության գեղեցկությունը, անդրադարձավ նաև այն պահպանելու, սերունդներին փոխանցելու կարևորությանը: Ուսանողը դասն ավարտեց այսպես. «Երբ դպրոց գնամ աշխատելու, աշնանը 1-ին և 10-րդ դասարանցիների հետ ծառատունկ կկազմակերպեմ:

Տասներորդիները դպրոցը կավարտեն, իսկ փոքրիկների հետ 10 տարիների ընթացքում կխնամանք ծառերը: Ավելի քան հանոզված են, որ դասարանի սիրահարված տղաներից և ոչ մեկը ծառերի վրա չի փորագրի «Ա+Գ=ՄԵՐ», քանի որ հասկանում է՝ չի կարելի ցավ պատճառել իր իսկ աճեցրած կենդանի օրգանիզմներին՝ բուսական աշխարհին»:

Արդեն քանի տարի է «Բնապահպանություն և շրջակա միջավայրի խնդիրներ» առարկան բանասիրական լսարանում ներկայացնում են սահիկահանդեսների տեսքով: Տեսասահիկները պատրաստելիս ձգտում են ընտրել ամենատպավորիչ նկարները, հնարավորությամբ դեպքում ցուցադրել մինչև 2-3 թուպե տևողությամբ տեսաֆիլմեր, որոնց օգնությամբ փորձում են բացահայտել բնության գեղագիտական ներդաշնակությունը: Դա նաև հնարավորություն է տալիս թաքցրած տեսախցիկի օգնությամբ բացահայտել բույսերի, կենդանիների «թաքուն կյանքը»: Ուսանողները հաճույքով և մեծ ոգևորությամբ են դիտում, քանի որ դրանցում ներկայացվում է անթերի, անսխալ, գույների ու ձևերի անթիվ, անհամար և անհավանական ցուգակցումներով բնաշխարհը: Չգտում են Բանասիրականի սաներին հասկացնել՝ բնությունն անճաշակ ոչինչ չի ստեղծում և միշտ ձգտում է բարձագույն ներդաշնակության: Եվ, պատկերացրեք, դա ինձ հաջողվում է. տարբեր թեմաներով ստուգարքային աշխատանքների վերաբերյալ ուսանողներից շատերը պատրաստում են սահիկահանդեսներ, որոնցում ներկայացնում են նաև իրենց բնակավայրի խնդրահարույց երևույթները: Հաճախ են ամբիոնում գործընկերներիս ներկայացնում բանասիրականի ուսանողների կատարած աշխատանքները:

Ես երջանիկ եմ, որ դասավանդում եմ նաև այս ֆակուլտետում, քանի որ գործ ունեն խելացի, բանիմաց, պրպտող, հետաքրքրասեր երիտասարդների հետ, որոնց մասնակցությամբ կարող եմ քննարկվել ամենատարբեր հարցեր՝ էկոլոգիական առումով կենցաղն անվտանգ դարձնելուց մինչև ապագա ընտանիքներում երեխաների մեջ բնության նկատմամբ սեր, հոգատարություն դաստիարակելու, անգամ լեզվի հարցեր:

Շատ եմ ցավում, որ համավարակի պատճառով ուսուցումն առցանց էր: Կենդանի շփմանը ոչ մի բանի չի կարող փոխարինել: Երիտասարդների հետ աշխատանքն ինձ հարստացնում և հոգեպես երիտասարդացնում է: Իհարկե, կարևորն առողջությունն է, և ուրախ եմ, որ իմ ուսանողների հետ շփումը շարունակում են առերես:

Ես սիրում եմ Բանասիրականը:

Սևիլա ԵՐԿԱԶԱՐՅԱՆ
Էկոլոգիայի և կայուն զարգացման ամբիոնի ողջենու



Ամեն ինչ լռեց...
 Նրան գտան մարտի դաշտում...
 Չորս կողմը զոհված զինվորներ էին՝ հայ, թուրք: Վրան հողի, քարի, գուղձերի հաստ շերտ կար: Աչքերը բաց էին, հայացքը հառել էր կապույտ երկնքին. դեմքին ժպիտ կար, հոգում՝ հանգստություն, իսկ ձեռքի մեջ՝ ինչ-որ բան...

-Տղե՞րք, են ո՞վ է:
 -Հը՞, Արտակը չի՞:
 -Հա էլի... մեր Արտակը...
 Մտռեցան ու պապանծվեցին: Չէին հավատում, որ պայծառ Արտակը, այն Արտակը, որ կատակով էր խոսում ամեն ինչի մասին, պատերազմի մասին, թե ինքը միանգամից մի ամբողջ վաշտ կվերացնի, այսօր ընկել էր մարտի դաշտում՝ վրեժ ուներ. պապին թուրքն էր սպանել:

Ընկեր-տղաները ծնրադրեցին սեփական հողում զոհված ընկերոջ առաջ: Ձեռքին ինչ-որ բան կար. ի՞նչ էր : Երբ բաց արին, տեսան՝ աղջկա նկար է՝ ժպտադեմ, կանգնած գետի ափին, ձեռքին էլ փուռը կար, որից էլ հոտ էր քաշում: Նկարը հողով շաղախված էր: Հետևում էլ երկտող կար.

Թե մարտում ընկնեմ, տխուր մի մնա,
 Անսեր մի՛ մնա, սիրի դու մեկին.
 Թող ջահել սիրտդ սիրով արբենա,
 Ափսոս է վարդը թռչնի գարունքին:

Վարդանը հիշեց, որ քույրը նեղացել էր, երբ Արտակը այդ խոսքերն էր ասել: Ինչո՞ւ էր այդ խոսքերը ասել, կանխագագու՞մ էր. դե գոհվելու վտանգ կար: Ինչքա՞ն շատ էր սիրում Արտակը, որ ուզում էր իր մահից հետո սիրած աղջիկը երջանիկ լինի: Շատ կուզեր, որ աղջկան երջանկացնող ինքը լիներ, իսկ թե ինքը չէր լինի, աղջիկը թող անսեր չմնա:

Վարդանը, Արմենը, Արսենը լուռ կանգնել էին, իսկ արցունքները շիթ-շիթ թափվում էին: Էլ ժամանակ չկար, պետք էր արագ Արտակի անշնչացած մարմինը հանելն դաշտից: Տարան զորամաս: Ամբողջ ճանապարհին Վարդանը մտածում էր՝ Նանեին ի՞նչ պիտի ասի:

Վարդանը Նանեի եղբայրն էր, Արտակի մանկության և մարտական ընկերը: Նրանք երեքով նույն քաղաքից էին, միասին են մանկապարտեզ, դպրոց հաճախել, ընդունվել Արցախի համալսարան ու եկել ծառայության. ի՞նչ իմանային, որ պատերազմ կսկսվի:

Երեկ ուրախ խոսում էին, միասին կատակներ անում: Հիշում էր՝ ինչ էր ասում Արտակը.

«-Վարդան, քրոջդ փախցնելու եմ, գիտե՞ս:
 - Արտա՞կ, ինչի՞ ես փախցնում: Արի մի լավ քեֆ անենք, թող բոլորը ձեր սիրո մասին իմանան:
 - Հմ... չէ՛, չհամոզեցիր: Կփախցնեմ, այ էդ ժամանակ բոլորը հաստատ կիմանան մեր սիրո մասին: Ասաց ու սկսեցին բարձր ծիծաղել»:

Բայց... պատերազմը խանգարեց: Այսօր արդեն 2020 թվականի սեպտեմբերի 27-ն է: Ու հենց այդ օրն էլ պատերազմը Արտակին տարավ... պատերազմի առաջին օրը:

Նանեն անհանգիստ էր. ո՛չ եղբորից լուր ուներ, ո՛չ էլ սիրած տղայից: Անհանգիստ քայլում էր սենյակում, հանգիստ չէր կարողանում նստել:

- Ա՛յ աղջիկ, ինչի՞ ես խառնվել իրար, ոչ մի բան չկա, չգիտե՞ս, որ Վարդանն ու Արտակը ժամը յոթի կողմերն են զանգ տալիս: Իրենք ապահով տեղում են, մի



Պատերազմ և սեր

անհանգստացիր:
 Մայրն էր. լավատես ու բարի տիկին Աննան: Երանի՜ այդպես լիներ, հանգստացնում էր աղջկան՝ ինքն էլ լավ իմանալով, որ կռվի մեջ փլավ չեն բաժանում, հանգստություն չկա:

Նանեն սիրում էր Արտակին... Էն էլ ոնց: Կանգ առավ, նստեց աթոռին ու մայեց իր ու Արտակի նկարին. ծառայության գնալուց առաջ էին նկարվել, իրենց տանը Վարդանի ծննդյան օրը:

Որքա՞ն երջանիկ են, ինչպե՞ս են ժպտում: Ա՛խ, որքան է ուզում նրան տեսնել, գրկել...

Նանեն հիշում է իրենց հանդիպումները և ակամա դեմքին ժպիտ է հայտնվում: Հիշում է՝ ինչպես էին ընկերներով գնացել քաղաքից դուրս, նստել ու գրուցում էին: Արտակն ու Նանեն նստել էին գետի ափին, կախել էին ոտքերը ջրի մեջ ու խոսում էին, ապագայի պլաններ էին մշակում. դեռ ինչքա՞ն բան կար անելու: Հիշում է՝ ինչպես գնացին Ղազանչեցոց:

-Նա՛ն, հաջորդ անգամ եկեղեցի մտնելիս խոստանում եմ՝ հարսի շորով ես լինելու:

Աղջիկը պինդ բռնել էր տղայի ձեռքը ու լուռ ժպտում էր. դե իր սրտովն էր: Նույնիսկ մի պահ թվաց, թե հարսանեկան զգեստով է ու պիտի գեղեցիկ քայլի, վարդի թերթիկներ են թափվում ուսերին, գլխին, ոտքերի տակ, ինքը պիտի գզույշ քայլի... ա՛խ, որքան իրական էր այդ երազը: Աղոթում էին միասին հայրենիքի խաղաղության համար. առանց խաղաղության ի՞նչ երջանկություն: Հիմա էլ հիշում էր ու հավատում, որ ամեն բան լավ կլինի, և իր հերոսը կգա...

Երազանքներ, որոնք, ավա՛ղ, այդպես էլ չէին իրականանալու:

Հնչեց հեռախոսի զանգը... ա՛խ այդ զանգը, որ պիտի ամեն ինչ փոխեր: Տիկին Աննան հեռախոսը ձեռքին պապանծվել էր, քարացած կանգնել.

-Ի՞նչ, Արտա՞կը...

ԸՆԾԵԼՈՒ ԸՐԱՄԱՅԱԿԱՆԸ



Պատերազմ, զոհեր, անհայտ կորածներ, գերիներ...

Այս մասին շատ ենք խոսել, շարունակում ենք հիշել, ու դեռ հիշելու ենք նրանց, ովքեր ընկան երզնու շուրթերին, անավարտ թողնելով գիրք, ընտանիք, սեր ու գաղափար:

Երկրորդ համաշխարհային պատերազմի զոհերից մեկն էլ Արմեն Արամի Ափինյանն էր: Նա, ով 1919 թ. ծնվել էր Լոռ-

ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԴԱՍԵՐ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆԻՑ

Մանկավարժականի 100-ամյակի առթիվ

վա Ղշլաղ (ներկայիս Վանաձորի կազմում) գյուղում, որմնադիրի ընտանիքում: Նրան և նա 17 բանաստեղծների, 5 արձակագիրների և 3 գրականագետների է նվիրված Սասուն Գրիգորյանի՝ Հաղթանակի 25-ամյակի առթիվ լույս տեսած «Նրանք ընկան երզնու շուրթերին» գրքում: Բանաստեղծների շարքն ընդարձակվել է նույն հեղինակի՝ դրանից հինգ տարի անց տպագրված «Հուշամատյան սիրո և սխրանքի» գրքում: Ափինյանը ստեղծագործել է չափածո խոսքի բոլոր ձևերով ու չափերով՝ քառյակ, տաղ, տրիոլետ...

Երբ սովորում էր Վանաձորի մանկավարժական ուսումնարանում՝ ներշնչված «աշխարհի մեծերով» և Լոռվա բնությանը ու լուռեցու հոգու հուզառատությանը, նրա մտքերը խոհեր էին ծնում ու բանաստեղծություններ: Մեկնեց ռազմաճակատ՝ դեռևս չհասցրած ձևավորել իր ինքնատիպությունը: Ափինյանը մարտադաշտ է մեկնել Երևանի Խ. Աբովյանի անվան ման-

կավարժական ինստիտուտի Բանասիրական ֆակուլտետից, ուսանողական նստարանին թողնելով «Մնաս բարով»-ը: Համոզված եմ, որ նաև մանկավարժականից ստացած նրա հայրենասիրական դասերն են օգնել ժամանակին բարձրաձայնելու իր սրտի թրթռումները.

*Մահու լինի քո գրկում,
 Որ քեզ կարոտ չմեռնեմ,-
 Որ իմ կարոտս առնեմ,
 Մահու լինի քո գրկում.
 Որ ցուրտ չզգամ իմ հոգում,
 Որ իմ սերը չսպառեմ,
 Մահու լինի քո գրկում,
 Որ քեզ կարոտ չմեռնեմ:*

Կյանքի նկատմամբ հավատ են ներշնչում Ափինյանի բանաստեղծությունները: Նրա վերջին նամակը ռազմաճակատից հասցեագրված է ծնողներին 1943 թ. մարտի 1-ին: Իսկ նույն տարվա մայիսի 18-ին նա հերոսաբար ընկավ Սևաստոպոլի համար մղված մարտերում:

Նանեն դուրս թռավ սենյակից, մոր ձայնից ու հայացքից ամեն ինչ փոխվեց, դառն արցունքներով լցվեցին գեղեցիկ աչքերը: Կարոտ, սեր, երջանկություն, դառնություն, մահվան գույժ... ամեն ինչ տակնուվրա եղավ երազկոտ աղջկա սրտում: Մեռավ մի գեղեցիկ ընտանիք, որը դեռ չէր էլ հասցրել ստեղծվել:

2020 թ. նոյեմբերի 9... պատերազմը լռեց, պապանծվեցին հրանոթներն ու տանկերը, բայրաքթարներն իրենց բները վերադարձան:

Շատերը շիրիմ ունեցան, շատերը՝ ոչ: Արտակն այն երջանիկներից էր, որ շիրիմ ունեցավ մահից մի քանի օր հետո:

Աննան Եղբայրական գերեզմանում է, կանգնել է Արտակի շիրիմի մոտ: Նայում է թարմ շիրմաքմբերի շարքին, և արցունքները միայն Արտակի համար չէին հոսում, այլ բոլոր նրանց, ովքեր այդպես էլ չհասան իրենց երազանքներին:

Պատերազմը խլեց Արտակին, բայց ոչ նրա հանդեպ ունեցած սերը...

Պատերազմը դառնահամ է, արյունոտ. արյունը կաթկթում է կորցրած մանկության, կիսատ մնացած հույզերի ու երազանքների, սիրո և սպասումների վրա: Կյանքը դառնում է արմահամ, դառնահամ: Ասում են՝ ժամանակը հեռացնում է, մոռացնում: Ամենակին: Որքան շատ ժամանակ է անցնում, միևնույն է, վերքը սպիանում է, բայց ցավը մնում է ու ավելի խորանում:

Հայաստան աշխարհի որևէ բնակչի համար չկան տարածքներ, կա Հայրենիք, որտեղ ամեն անկյունում դու կյանք ես դրել: Չկան վարձկան կռվողներ, կա անհատը՝ կոնկրետ ընտանիքից դուրս եկած:

Ցավը գույն ունի... ծիածանի գույներից 8-րդը «ցավագույնն է»՝ կորցրած երազանքների, անվերադարձ սպանած ժամանակի ու լռությունից խեղդող հոգիների: Ժամանակը պտույտ է անում ու մեզ նորից նույն կետին է բերում՝ տարբեր կողմերից մայելու:

Երանի իմ աչքերին, որ տեսել են Արցախ աշխարհը խաղաղ ժամանակ, որ եղել են Շուշիում ու աղոթել Ս.Ղազանչեցոց եկեղեցում:

Նա այդպես էլ չեն «սովորի» պատերազմի ձայնին, չեն կարողանա հանգիստ մայել, թե ինչպես են ավերում Աստուծո տունը, Ս. Ղազանչեցոցը՝ իր սպիտակ զանգով: Ես պատերազմ չեմ ուզում:

Ես երազում եմ, որ իմ հերոսը ապրի: Իհարկե, ես էլ վերջում հող կդառնամ, ինչպես բոլորը, բայց հող դառնալուց հետո էլ երդվում եմ, որ թշնամուն հանգիստ չեմ թողնի:

Քրիստոսի արյամբ, հավատքով ամրացած ու հերոսույն տղերքի արյունով սրբացած իմ երկիրը՝ Հայաստանը, միշտ է ծիլ տալու, միշտ կյանք է տալու:


...Ու ինչ էլ լինի, միևնույն է, մի օր մենք կհանդիպենք ու իրար ուժ կտանք: Մենք միասին կանցնենք մեր թուլությունների վրայով, պառակտված կամքը կմիացնենք ու կդառնանք Մեկ. մի ամբողջություն:

Տարածքը, որի վրա երազանքներ ունեցող զինվորի արյուն է թափվել, այլևս սոսկ հողակտոր չէ, այլ ՀԱՅՐԵՆԻՑ, որը չեն գիշում...

Լիլիթ ԳՐԻԳՈՐՅԱՆ
 Բանասիրական ֆակուլտետ, 3-րդ կուրս



ՎԱՂԱՐՇԱԿ ՔՈՍՅԱՆ



1982 թ. նա արժանացել է ԴՄԻՍԻ Բարձրագույն դպրոցի վաստակավոր գործչի կոչմանը:

Վ. Քոսյանին են պատկանում մի շարք աշխատություններ՝ նվիրված հայերենի համալսարանական քերականությանը, գրաբարին, միջին հայերենի և ժամանակակից հայոց լեզվի շարահյուսական կառուցվածքի ուսումնասիրությանը, միջին հայերենին («Ժամանակակից հայերենի բառակապակցությունները», 1975 թ., «Ժամանակակից հայերենի նախադասության վերլուծության հարցեր», 1976 թ., «Գրաբարի բառակապակցությունները», 1980 թ., «Միջին հայերենի բառակապակցությունները», 1984 թ., «Արևմտահայերենի բառակապակցությունները», 1986 թ. և այլն): Դեկավարել է Ազաթանգեղոսի, Դավիթ Դրասխանյանի և Գրաբարի համալսարանները կազմելու աշխատանքը: Համահեղինակել է նաև «Հայոց լեզու. շարահյուսություն» (1975 թ.), «Հայոց լեզու» (մաս 1, պրակ 1, 1980 թ.) բուհական դասագրքերը, «Հայ?? լեզվի գործնական աշխատանքների ձեռնարկը» (1989 թ.) աշխատությունը:

Մահացել 1992 թ. դեկտեմբերի 12-ին: Վաղարշակ Քոսյան գիտնական-անհատն ապրում է իր ուսանողների, իրեն ճանաչողների հուշերում:

Կարինե ՍՈՂՈՍՆԱՆ
ՀՊՄՀ գիտական թանգարանի գիտաշխատող

ԼՐԱՀՈՍ

Կներդրվի նոր դասընթաց Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետում

Արդեն մեկ տարի է, ինչ Մանկավարժական համալսարանի Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետը գործակցային կապի մեջ է «Պերկինս» միջազգային կազմակերպության հետ: Օրերս Մանկավարժական համալսարանում ֆակուլտետի ղեկավարությունը և պրոֆեսորադասախոսական համակազմը ընդունեցին կազմակերպության վերապատրաստման մոդուլային ծրագրի ներկայացուցիչներ Սոնյա Ալիմովիչին և Աննա Կատուչիչին:



Փորձագետները այցի շրջանակներում աշխատանքային հանդիպումներ ունեցան համալսարանի հատուկ մանկավարժների հետ՝ գործնականում համատեղ քննարկելով տեսողության կեղևային զարգացման խանգարումների վերաբերող մի շարք հարցեր:

Առաջիկայում նպատակ է դրվել համատեղ մշակել առարկայական նկարագիր, իսկ դասընթացը 2022-2023 ուսումնական տարում կդասավանդվի Հատուկ կրթության ֆակուլտետի մագիստրատուրայի 1-ին կուրսում:

Սեմինար-քննարկում

Մայիսի 18-ին խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի ուսանողական խորհրդի սոցիալական հանձնախումբը կազմակերպել էր «Առաջնորդության դերը հասարակության մեջ» խորագրով սեմինար-քննարկում, որն անցկացրեց փորձագետ Դավիթ Մեջլումյանը:


Դավիթը սովորել է N 152 հիմնական դպրոցում, այնուհետև Եվրոպական քոլեջի կառավարման բաժնում: Դավիթն ինքնակամ հեռացել է համալսարանից և զբաղվել ինքնակրթությամբ՝ տարբեր գրքերի և տարբեր կուրսերի միջոցով:

Հանդիպման ընթացքում քննարկվեց՝ կյանքում ի՞նչ դեր ունեն առաջնորդները և ինչպիսի՞ հատկանիշներով պետք է օժտված լինեն: Քննարկումն ավելի հասկանալի դարձնելու համար Դավիթն օրինակ բերեց «Բոստոնյան մատրիցա» երևույթը: Քննարկվեց նախաձեռնող և պատասխանատու լինելու դրական ու բացասական կողմերը, դերն ու նշանակությունը, և տարբեր տարիքային փուլերում դրանց դրսևորումը:

Դավիթն ուսանողներին խորհուրդ տվեց շատ կարգալ գրքեր, հատկապես առանձնացրեց Ռոբերտ Սապրլսկիի «Биология добра и зла» գիրքը:

Սեմինարի վերջում ուսանողների և հյուրի միջև ստեղծվեց հարցուպատասխանի և անմիջական շփման ակտիվ միջավայր:

Նարե ԽԱՆԱՂՅԱՆ
Կուլտուրայի ֆակուլտետ, լրագրության բաժնի 1-ին կուրս



Համալսարանի երախտավորները

ՎԱԶԱԳԱՆ ԽԱԼԱԹՅԱՆ

Սուրդմանկավարժ, մանկավարժական գիտությունների թեկնածու Վաչագան Խալաթյանը առաջին հայ մանկավարժն է, որը ստացել է բարձրագույն արատաբանական կրթություն:

Տարին հորեյրյանական է Վաչագան Խալաթյանի համար՝ այս տարի նա կդառնար 90 տարեկան:

Վաչագան Խալաթյանը ծնվել է 1932 Լոռու մարզի Ուռուտ գյուղում: Գյուղի ութամյակն ավարտելուց հետո բարձր դասարանների ուսումը շարունակում է Ստեփանավանի միջնակարգ դպրոցում, որն ավարտում է 1949-1950 ուսումնական տարում: Նույն տարում ընդունվում է Երևանի Բոլորսովի անվան օտար լեզուների պետական մանկավարժական ինստիտուտի ֆրանսիական ֆակուլտետը: 1954 թվականին ավարտում է ինստիտուտը և գորակազմվում բանակ:

Վաչագան Խալաթյանը երկար տարիներ ղեկավարել է թույլ լսող երեխաների հատուկ դպրոցը, հայկական ժեստերի լեզվի հիմնադիրն է և սուրդմանկավարժական մի

շարք հրատարակությունների հեղինակ, նրա ղեկավարությամբ պատրաստվել են մանկավարժական գիտությունների թեկնածուներ «Հատուկ մանկավարժություն» մասնագիտությամբ:

Թանգարանային ֆոնդում պահվող Վաչագան Խալաթյանի ձեռագիր նմուշից պարզվում է (ՀՊՄՀ թանգարան ԳԳ-369, Փ-62), որ մինչև 1938 թվականը խիստ պայքար էր ծավալվել հաղորդակցման միմիկ մեթոդի դեմ: Ժեստերով հաղորդակցվելը խստիվ արգելվում էր: Դպրոցներում «կորչի միմիկան», «միմիկան խուլերի թշնամին» է լրգունգները էին հնչում և երբ 1938 թ. Մոսկվայում կայանում է չլսողների ուսուցման և դաստիարակման հարցերին նվիրված գիտաժողովը, քննդատվում է կիրառվող մաթուր բանավոր մեթոդը և թույլատրվում է ուսումնական ընթացքում օգտագործել ժեստերի լեզուն և մատնախոսությունը:

Մինչև 1959 թվականը Հայաստանում չլսողների դպրոցում մատնախոսությունը չէր օգտագործվում: 1959 թվականին մշակվում է նոր հայեցակարգ, ըստ որի մատնախոսությունը համարվում է ելակետային: Մատնախոսության այբուբեն ստեղծելու անհրաժեշտություն է առաջացանում: 1960 թվականին ռուսական մատնախոսության այբուբենի հիման վրա կազմվում է հայկական տարբերակը, որի հեղինակը Վաչագան Խալաթյանն էր: Ձեռնարկը հաստատվում է լուսավորության նախարարության կողմից և գործածության մեջ դրվում:

Վ. Խալաթյանը հեղինակել է «Հատուկ մանկավարժության բառարան», «Հայկական ժեստերի լեզվի բառարան» (2001 թ.) և «Խոսող ձեռքեր» հայկական ժեստերի լեզվի բառարան ուսումնաստանողական ձեռնարկները:

Լիլիթ ՍեՓՅԱՆ
ՀՊՄՀ գիտական թանգարանի ավագ գիտաշխատող

«Լրագրությունը մարդու մասին, մարդու համար է» Հանդիպում Մարինե Մարտիրոսյանի հետ

Մայիսի 19-ին կուլտուրայի ֆակուլտետի լրագրության առաջին կուրսի ուսանողներին հյուրընկալեց «Հետք»-ի լրագրող Մարինե Մարտիրոսյանը: Լրագրողը Կապանից է, ով իր մասնագիտական փորձով ապագա լրագրողներին պատմեց իր գործունեության մասին, որպես մասնագետ տվեց խորհուրդներ:

«Պետք է ուշադրություն դարձնել բայերին: Ածականները մեզ համարյա ոչինչ չեն տալիս»-ասաց Մարինեն, - «դու պետք է հասկանաս դիմացինը ստո՞ւմ է քեզ, թե՞ ոչ, որպեսզի սուտ նյութ չգրես»:

Ձրույց ծավալվեց նաև կեղծ կայքերի, լուրերի, աշխատանքային դժվարությունների, հոդվածների և նյութերի շուրջ, մասնավորապես՝ «Փոքր երկրի մեծ, բունավոր «աչքը», «9 երեխաների մայր»։ «Չեն թողնում էրեխեքս վիզները ծռեն կամ ուրիշից հետ մնան» և այլն:

Հանդիպման ավարտին փորձառու լրագրողը հիշեցրեց՝ մասնագիտական հմտությունները զատ կարևոր է տեղեկատվության հավաստիությունն ու ճշմարիտ լինելը:

Էլեն ԳՐԻԳՈՐՅԱՆ
Կուլտուրայի ֆակուլտետ, լրագրության բաժնի 1-ին կուրսի ուսանողուհի





Արժեքավոր նվիրատվություն

Հայկական ճարտարապետությունը ուսումնասիրող հիմնադրամը ՀՊՄՀ Պատմության և հասարակագիտության ֆակուլտետի հետ համագործակցության արդյունքում 60 ամուն պատմաճարտարագիտական արժեքավոր գրքեր, քարտեզներ, պլաններ և ուղեցույցներ նվիրեց համալսարանին:

Արմեն Հախնազարյանի կողմից ստեղծված հիմնադրամին հետագայում իր ջանքն ու նվիրումը բերեց Սամվել Կարապետյանը: Այսօր արդեն երջանկահիշատակ Սամվել Կարապետյանի փոխարեն հիմնադրամը ղեկավարում է կինը՝ Էմմա Աբրահամյանը:

Ռեկտոր Սրբուհի Գևորգյանը շնորհակալություն հայտնեց նվիրատվության և այն շնորհակալ աշխատանքի համար, որ իրականացնում է Հայկական ճարտարապետությունը ուսումնասիրող հիմնադրամը: Դիմելով դափնի ճանաչում և նախաձեռնություններին՝ ռեկտոր Սրբուհի Գևորգյանն ասաց. «Դուք ակներև տեսնում եք, թե այսօր էլ Հայաստանում, Հուլիսում և այլուր աղբյուրներ են գնում, որքան ջանք են թափում՝ ոչնչացնելու մեր մշակութային ժառանգությունը, քանզի այն մեր ինքնության, մեր ազգային նկարագրի ու խառնվածքի արտահայտությունն է»:

Ռեկտորը փաստեց՝ ազգային ինքնությունը մեր պատմությունն է, մշակույթը և լեզուն: Շնորհակալություն հայտնելով արժեքավոր նվիրատվության համար՝ ռեկտորն ինքն էլ խոստացավ համալսարանի գրադարանին նվիրել ևս մեկ կարևոր գիրք՝ «Արցախի պատմամշակութային ժառանգությունը»:

Պատմության և հասարակագիտության ֆակուլտետի ղեկան էդգար Հովհաննիսյանն ասաց, որ դժվար էր չփնտել Սամվել Կարապետյանի հետ և չհամակվել նրա հայրենասիրությանը:

Պատմաբանների հյուր, հիմնադրամի փոխտնօրեն Բաֆֆի Քորթոյանն այսօր շարունակում է Ս. Կարապետյանի գործն ու ձևավորած ավանդույթները:

«Համալսարանը սերունդներ է կրթել և կրթության տաճար է», - ասաց նա՝ վստահ, որ նվիրաբերած գրքերն ու քարտեզները այստեղ կգտնեն ընթերցողներին: Ի սկզբանե Ախենուն ստեղծված հիմնադրամի նպատակն էր գոնե թղթի վրա ունենալ ոչնչացվող պատմական հուշարձանները:

Այսօր էլ Արթուրյանը շարունակում է ոչնչացնել մեր պատմական հուշարձանները, և մենք պարտավոր ենք այդ մասին բարձրաձայնել աշխարհին՝ գոնե մնացածը պահպանելու համար»:

Բաֆֆի Քորթոյանը տեղեկացրեց, որ հիմնադրամի կայքէջում ներառված է այդ ամենի էլեկտրոնային տարբերակը: Նա հույս հայտնեց՝ «մի օր մեր աշխատանքով հետ կբերենք այդ ամենը»:

«Մեր թշնամիները չեն հանդուրժում այն, ինչ մենք ունենք, - ասաց գիտական գրադարանի տնօրեն Տիգրան Պետրոսյանը՝ վստահեցնելով՝ գրքի տեղը գրադարանն է, և այս արժեքավոր գրքերն անպայման իրենց տեղը կունենան գրադարանում»:

Համաշխարհային պատմության ամբիոնի վարիչ Խաչատուր Ստեփանյանն իրավացիորեն նկատեց. «Սամվել Կարապետյանն իր ստեղծած գրքերով ազդում է ցանկացած մարդու սոցիալական ձեռագրաբանության վրա»:

Հանդիպումն ամփոփեց ղեկան էդգար Հովհաննիսյանը. «Մեծ երախտագիտությամբ ընդունում ենք այս նվերը՝ հանդգնված, որ այս հանդիպումը դառնալու է շարունակական գործակցության հիմնաքարը»:

Աշխատանքներն իրականացվել են Արևմտյան Հայաստանում, Արցախում, Խորհրդային Ադրբեջանում, որը Հայաստանում: Նվիրատվության մեջ նաև Մեծ Հայքի գավառներից նվիրված գրքերի առաջին ստեղծված 4 հատորներն էին՝ հայտնաբերված 4 հատորներն էին՝ հայտնաբերված 4 հատորներն էին՝ հայտնաբերված 4 հատորներն էին՝ հայտնաբերված 4 հատորներն էին՝ հայտնաբերված 4 հատորներն էին»:

Սիլվա ԱՍՐՅԱՆ

Լույս է պնտել

Լույս է տեսել հոգեբանական գիտությունների թեկնածու, ՀՊՄՀ Լրագրության ամբիոնի դասախոս, Լրատվության և հանրության հետ կապերի վարչության պետ Դիանա Մարկոսյանի «Արտակարգ իրավիճակներում աշխատող լրագրողի սոցիալ-հոգեբանական պատրաստվածության հիմնախնդիրը» ուսումնամեթոդական ձեռնարկը: Այն նախատեսված է ինչպես բարձրագույն ուսումնական հաստատությունների՝ լրագրության մասնագիտությամբ ուսումնառողների, այնպես էլ գործող լրագրողների համար:

«ԶԼՄ-ները սոցիալական կառավարման կարևորագույն գործոնի դեր են կատարում, հատկապես՝ արտակարգ իրավիճակներում: Շնորհիվ լրատվամիջոցների՝ ցանկացած արտակարգ իրավիճակ կամ տարեբային աղետ ձեռք է բերում տեղեկատվական-հաղորդակցական ռեզոնանս, ինչը կարող է կամ խորացնել հետևանքների աղետալիությունը, կամ օգնել գերծնալ դեպրեսիայից, ապատիայից: Այսինքն, ԶԼՄ-ն այսօր իրականացնում է սոցիալական ոլորտի յուրատեսակ հոգեթերապիա: Ու հատկապես այսօր, երբ արտակարգ իրավիճակների մասին տեղեկատվությունը գերակայում է այլ իրադարձությունների լուսաբանման նկատմամբ, դրանով իսկ ձևավորելով զանգվածային գիտակցության հարմարման էֆեկտ աղետների, դրանց անխուսափելիության նկատմամբ: Այդ ամենի արդյունքում՝ հասարակության մոտ արտակարգ իրավիճակներում չի գործում անվտանգ վարքի համարժեք ընկալումը», - ասում է գրքի հեղինակը:

Ըստ Դիանա Մարկոսյանի, արտակարգ իրավիճակի իրական մակարդակի և տեղեկատվական դաշտում նրա լուսաբանման բնույթի միջև հավասարակշիռ հարաբերակցության բացակայության պայմաններում, մարդիկ հայտնվում են կրկնակի հոգեբանական ճնշման տակ՝ անմիջական տվյալ իրավիճակի և լրատվամիջոցներում նրա լուսաբանման գերակայության, ըստ էության հանդիսանալով հասարակության սոցիալական կարգավորիչ, չեն նպաստում արտակարգ իրավիճակում հասարակության սոցիալ-հոգեբանական կայունությանը և չեն իրականացնում իրենց առաջնային խնդիրներից մեկը՝ զանգվածային գիտակցության հոգեշտկումը»:

Դիանա Մարկոսյանը նկատում է, որ այս հիմնախնդրի պատճառներից մեկը լրագրողների հոգեբանական անբավարար պատրաստվածությունն է, ինչը հավասարապես, կամ առաջին հերթին վնասում է հենց լրագրողին, ապա, նրա միջոցով, նաև հասարակությանը՝ լսարանին: Հեղինակն այս իմաստով կարևորել է լրագրողների հոգեբանական պատրաստվածությունը, և իր հիմնավորումները ուսումնամեթոդական ձեռնարկում ներկայացրել գիտափորձի միջոցով, որն իրականացրել է ոչ միայն ՀՀ-ում, այլև Արցախում արտակարգ իրավիճակներում աշխատած լրագրողների շրջանակում:

Ձեռնարկում նաև ներառված է արտակարգ իրավիճակների պայմաններում անվտանգ գործելու մանրամասն ուղեցույց, խորհուրդներ ինչպես արտակարգ, այնպես էլ պատերազմական իրավիճակներում լրագրողի գրագետ գործունեության վերաբերյալ:

Ուսումնամեթոդական ձեռնարկն ընդգրկում է լրագրություն մասնագիտությամբ բակալավրի պատրաստման համար պետական կրթական չափորոշչին համապատասխան «Արտակարգ իրավիճակներում աշխատող լրագրողի սոցիալ-հոգեբանական պատրաստվածությունը» դասընթացի առարկայական նկարագիրը, ներկայացված են մեթոդական նյութեր:

Գրախոսները հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսորներ, ՀՊՄՀ ռեկտոր Սրբուհի Գևորգյանն ու Գիտահետազոտական կենտրոնի տնօրեն Կամո Վարդանյանն են:

«Մենք ապրում ենք աշխարհագրական և գեոպոլիտիկ այնպիսի պայմաններում, որ արտակարգ իրավիճակները, բնական աղետներն ու պատերազմները անխուսափելի են: Իսկ հասարակությունը, որը կամա թե ակամա, ենթարկվում է զանգվածային լրատվամիջոցների ազդեցությանը, բավարար մակարդակի սթրեսակայուն չէ: Հետևաբար, անչափ կարևոր է լրագրողների հոգեբանական բավարար պատրաստվածությունը», - ընդգծում է Դիանա Մարկոսյանը:



ԵՐԿՆՈՍՈՒԹՅՈՒՆ

- Ես կլռեմ, դու հասկացիր...
 - Թեկուզ վրձնեն մատներդ մի պահ, ես կհասկանամ ինչ ես նկարում կամ ինչ պատկեր ես փորձում պատկերել:
 - Ես մատներիս շարժումները կխառնեմ վրձինների մեջ ու գույներով կծածկեմ ամեն բան:
 - Իսկ ես ընտրածդ գույների խառնուրդի մեջ կգտնեմ հոգուդ լարերը, որ

ամեն անգամ ձեռքիդ միջոցով դուրս են գալիս և նկարի հետ միաձուլվում:
 - Երբ հասնես սևով ներկված պատկերին, մտքումդ հոգուս լարը կկտրվի կամ պարզապես աննկատ ու անձայն կդառնա...



-Այդ ժամանակ, ես իմ հոգու ամուր լարերը կընծայեմ, որպեսզի վերականգնեմ կտրված լարերը:
 -Մի՞թե տարբեր լարերը մեկը մյուսին կապակցելով կարելի է վերականգնել հոգուս գույները:
 -Այո, և ստացված լարերը կստանան մի նուրբ երանգ՝ մի գույն, որը ծիածանն անգամ չունի և նա կսկսի նախանձել մեր կազմած նոր, փայլուն գույնով լարերին, որը կկոչիք թու անուկ:

-Ինչու՞ հենց իմն այդ բազմագույն անունների մեջ,
 -Որ քո ամուլն դառնա այն գույնը, որ քեզմից բացի ոչ ոքի համար հասու չլինի, իսկ ապագայի նկարիչները՝ անունդ տալով ձգտեն այդ գույնին:
 -Ես կլռեմ...
**Երազիկ ՎԱՐԴԱՆՅԱՆ
 Հակոբ ՎԱՐԴՊԵՏՅԱՆ
 Մաթեմատիկայի, Ֆիզիկայի և
 Ինֆորմատիկայի ֆակուլտետ
 մաթեմատիկայի բաժնի 4-րդ կուրս**

Գրանցման վկայական՝ 01U00184 տրված է 26.03.2008 թ. Հասցեն՝ Տիգրան Մեծի 17, հեռ. 59-70-97: Էլ. փոստ՝ Newspaperaspu.am, asryansilva@gmail.com
Տպագրված է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպագրատանը: Հասցեն՝ Արշակունյաց 2 Տպաքանակը՝ 1800 օրինակ: Ծավալը՝ 2 տպ. մամուլ

Թերթի նյութերի արտատպումներն առանց խմբագրության համաձայնության արգելվում է: Հղումը պարտադիր է: Թերթը տարածվում է անվճար: Հանձնված է տպագրության 16.07.2022 թ.
Թերթը կարող եք կարդալ ՀՊՄՀ կայքում՝ www.aspu.am

Գլխավոր խմբագիր՝ Սիլվա ԱՍՐՅԱՆ
 Բանասիրական գիտությունների թեկնածու Էջադրումը՝ Պետրոս ՎԱՐԴԱՆՅԱՆԻ Համարի պատասխանատու՝ Սիլվա ԱՍՐՅԱՆ